ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

06-ը մարտի 2017 թվականի № 29-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՌԱԴԻՈԱԿՏԻՎ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱԾ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔԻ ԱՆՎՏԱՆԳ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄՇԱԿՈՂ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2017 թվականի հունվարի 19-ի ՆԿ-7-Ա կարգադրության 2-րդ կետով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության վարչապետի 2017 թվականի փետրվարի 6-ի №02/24.10/2230-17 հանձնարարականի.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետությունում ռադիոակտիվ թափոնների և աշխատած միջուկային վառելիքի անվտանգ կառավարման ռազմավարությունը մշակող միջգերատեսչական աշխատանքային խումբ և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբին՝ մինչև 2017 թվականի մայիսի 20-ը մշակել Հայաստանի Հանրապետությունում ռադիոակտիվ թափոնների և աշխատած միջուկային վառելիքի անվտանգ կառավարման ռազմավարությունը:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
էներգետիկ ենթակառուցվածքների և
բնական պաշարների նախարարի
2017 թվականի մայիսի-ի 06-ի № 29-Ա հրամանի

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Արեգ Գալստյան	Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի խորհրդական (աշխատանքային խմբի ղեկավար)
Հայկ Բաղալյան	Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի էներգետիկայի վարչության պետ
Արտեմ Պետրոսյան	Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի էներգետիկայի վարչության ատոմային էներգետիկայի բաժնի պետ
Արա Մկրտչյան	Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության աշխտակազմի սպառազինությունների վերահսկման և միջազգային անվտանգության վարչության գլոբալ անվտանգության և ոչ կոնվենցիոնալ խնդիրների բաժնի վարիչ (համաձայնությամբ)
Աշոտ Մնացականյան	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի ճառագայթային անվտանգության վարչության պետ (համաձայնությամբ)
Անահիտ Ալեքսանդրյան	Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության բաժնի պետ (համաձայնությամբ)
Վարդուհի Հովհաննիսյան	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության աշխատակազմի տարածքային կառավարման վարչության տարածքային զարգացման պլանավորման բաժնի գլխավոր մասնագետ (համաձայնությամբ)
Կորյուն Գևորգյան	Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի արդյունաբերության զարգացման վարչության պետի

	տեղակալ (համաձայնությամբ)
Արտավազդ Դավթյան	Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության բնակչության պաշտպանության և աղետների հետևանքների վերացման կազմակերպման վարչության պետ, փրկարար ծառայության գնդապետ (համաձայնությամբ)
Կարապետ Կարապետյան	Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության բնակչության պաշտպանության և աղետների հետևանքների վերացման կազմակերպման վարչության տեխնածին վթարների բաժնի պետ, փրկարար ծառայության գնդապետ (համաձայնությամբ)
Արշակ Սմբատյան	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության աշխատակից (համաձայնությամբ)
Միսակ Կիրակոսյան	«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության անվտանգության բաժնի պետ
Աշոտ Խաչատրյան	«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության միջուկային վառելիքի լաբորատորիայի պետ
Միշիկ Գագինյան	«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության ակտիվազերծման և ճառագայթաակտիվ թափոնների թաղման արտադրամասի պետի տեղակալ
Արտաշես Հովհաննիսյան	Հայաստանի Հանրապետության «Ատոմային էլեկտրակայանների շահագործման հայկական գիտահետազոտական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության առաջին կարգի ճարտարագետ
Հեկտոր Բաբայան	«Հայաստանի Հանրապետության Ազգային Ակադեմիայի Երկրաբանական գիտությունների ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության աշխատակից (համաձայնությամբ)
Միքայել Սարգսյան	«Ռադիոակտիվ թափոնների վնասազերծում» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն